# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10(տաս) անդամներ: Բացակա էր Գեորգի Աղաջանյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հարություն Ալեքսանյանը, համայնքապետարանի աշխատակիցներ Միշա Եղիազարյանը, Լիդիա Պողոսյանը, Մերի Կարապետյանը, Նվարդ Ալավերդյանը, Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններ իրականացնող Գևորգ Հայրապետյանը, Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններ իրականացնող Մնացական Գևորգյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը :

Նիստն արձանագրում էր Լաուրա Ալեքսանյանը :

Մինչև նիստն սկսվելը համայնքի ղեկավարը ողջունեց նորընտիր ավագանու անդամներին՝ ողջունելով բոլորին, շնորհավորեց նրանց 2017թվականի նոյեմբերի 5-ին ՏԻՄ ընտրությունների արդյունքում ավագանու անդամներ ընտրվելու կապակցությամբ: Ընտրությունների արդյունքում 3 բնակավայրեր՝ Բյուրեղավան քաղաքը, Նուռնուս և Ջրաբեր գյուղերը միավորվեցին և ձևավորվեց նոր համայնք՝ Բյուրեղավան համայնքը: Հ. Բալասյանը նշեց, որ Բյուրեղավան համայնքն այսօր գումարում է ավագանու առաջին նիստը: Շնորհավորեց առաջին նիստի կապակցությամբ՝ ցանկանալով, որպեսզի թիմային մտածելակերպով ու մեծագույն պատասխանատվությամբ համատեղ աշխատեն զարգացնել խոշորացված համայնքը՝ յուրաքանչյուր բնակչի հոգսն ու խնդիրը դարձնելով իրենցը: Նաև նշեց, որ հետագա աշխատանքների հաջողությունը պայմանավորված է նաև ավագանիների ակտիվ մասնակցությամբ և որպես համայնքի ղեկավար, կողջունի ցանկացած նոր իրատեսական

գաղափար, որը կնպաստի համայնքի համաչափ զարգացմանը և պատրաստ է աջակցել դրանց իրականացմանը: Մաղթեց սերտ համագործակցություն, փոխադարձ վստահություն և արդյունավետ աշխատանք:

Համայնքի ղեկավար Հ. Բալասյանը խոսքը տվեց Նվարդ Ալավերդյանին:

Ն. Ալավերդյանը ներկայացրեց թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 10-ի «Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու անդամներ ընտրվելու մասին» N 37- Ա և «Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար ընտրվելու մասին» N 38- Ա որոշումները, այնուհետև ներկայացրեց ավագանու անդամների համառոտ կենսագրականները՝

| Ազգանուն, անուն | Ծննդ. թիվ | Կրթութ. | Կուսակց. պատկ.. | Աշխատանքի վայր, մասնագիտ. | Ընտանեկան դրություն |
|---|---|---|---|---|---|
| Աղաջանյան Գեորգի | 1988թ. | բարձրագ. | անկուս. | անհատ ձեռնարկատեր, | ամուսնացած է , ունի 2 երեխա |
| Ապրեսյան Վահրամ | 1992թ. | բարձրագ. | անկուս. | Բյուրեղավանի մանկապատ. մարզադպրոց, մարզիչ | ամուսնացած է, ունի 1 երեխա |
| Առոյան Ավետիք | 1982թ. | միջն. | անկուս. | անհատ ձեռնարկատեր | ամուսնացած է , ունի 2 երեխա |
| Ավագյան Արտյոմ | 1986թ. | միջն. | անկուս. | անհատ ձեռնարկատեր | ամուսնացած է, ունի 2 երեխա |
| Բաղդասարյան Հայկազ | 1987թ. | թերի բարձրագ. | անկուս. | ֆինանսիստ | ամուսնացած է, ունի 2 երեխա |
| Խանզադյան Արման | 1985թ. | բարձրագ. | անկուս. | «Վարատ» ՍՊԸ տնօրեն, իրավագետ | ամուսնացած է, ունի 2 երեխա |
| Հարությունյան Սլավիկ | 1967թ. | միջն. | անկուս. | «Բյուրեղալկո» ՍՊԸ փոխտնօրեն | ամուսնացած է, ունի 2 երեխա |
| Ծառոյան Արզամ | 1984թ. | միջն. մասն. | ԲՀԿ | «Բյուրեղավան» համատիրության նախագահ, | ամուսնացած է, ունի 3 երեխա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | բանկային գործ | |
| Սուքիասյան Վարդան | 1986թ. | միջն. | անկուս. | «Գազպրոմ Արմենիա» ընկերություն, հսկիչ | ամուսնացած չէ |
| Վարդանյան Հայկ | 1993թ. | թերի բարձրագ. | անկուս. | «Աբովյանի ԳԳՄ», տեսուչ | ամուսնացած չէ |
| Օհանյան Արման | 1978թ. | բարձրագ. | ՀՅԴ | Բյուրեղավանի արհեստագործ. ուսումնարան ՊՈԱԿ տնտեսվար, տնտեսագետ | ամուսնացած է, ունի 2 երեխա |

Այնուհետև ավագանու անդամ Հայկազ Բաղդասարյանը հանդիսավոր ընթերցեց ավագանու անդամի երդման տեքստը՝

«Ես՝ Հայկազ Բաղդասարյանս ստանձնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու անդամի լիազորությունները, երդվում եմ՝ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ համայնքի զարգացման և բարօրության:»: Ավագանու անդամները սորագրեցին իրենց անհատական երդման տեքստերը:

Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը ներկայացրեց ավագանու առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին որոշման նախագիծը՝

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին,

2) «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու և «Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի մասին,

4) «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչան հիմնարկի, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբերի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին,

8) Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 01-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո հաստատված հերթականությամբ ներկայացվերցն առաջին նիստի որոշումների նախագծերը:

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետի՝ ավագանին որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի ։

2.Ուժը կորցրած ճանաչել

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N93 – Ն որոշումը,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 28-ի «Նուռնուս համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 30-ի N 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N49-Ն որոշումը,

3) . Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 27-ի «Ջրաբեր համայնքի ավագանու կանոնակարգի մասին» N32 – Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 02-Ն/

Լսեցին

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Իրավաբանական անձանց

Որոշումն ընդունված է. / որոշում N 04-Ա/

Լսելով

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԻ,«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ,18-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի72-րդ, 60-րդ հոդվածների՝ ավագանին որոշում է.

1. [illegible]թվականի նոյեմբերի 11-ին դադարեցված համարել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հինարկի, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուսի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հինարկի, «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբերի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հինարկի գործունեությունը :

2. Սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային կառավարչական հիմնարկների գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներառել և հաշվառել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում :

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1)Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N 11-Ա որոշումը,

2)Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2013թվականի մարտի 12-ի «Նուռնուսի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N13 որոշումը,

3)Ջրաբեր գյուղական համայնքի ավագանու 2013թվականի մարտի 13-ի «Ջրաբերի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N10 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 05-Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2017 թվականի համար, պաշտոնային դրույքաչափը սահմանել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «2017 թվականի համար Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին» N 114-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 06-Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72- րդ հոդվածի 1-ին մասի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «2017թվականի համար Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 115-Ա որոշումը:

4. Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

5. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 07-Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքիմարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 08-Ն/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 5-րդ կետը՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավանի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների քանակը սահմանել 3 (երեք) :

2.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկել ավագանու անդամներ Արգամ Շառյանին, Ավետիք Ասոյանին, Վահրամ Ապրեսյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հնաձնաժաղովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» N94-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

Ավագանու առաջին նիստի օրակարգի հարցերը սպառվեցին:
Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ________________

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ________________

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ____________________

ՀԱՅԿԱԶ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ____________________

ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ____________________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ____________________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ____________________

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ____________________

ՀԱՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ____________________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ____________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝____________________ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ